Ահա այն անձնավորությունները, որոնց հիշում է Վարդանը որպես միաբաններ և առաջնորդներ այն ուխտի, ուր նա Տոնականն էր ընդօրինակում, և որոնց մենք հանդիպում ենք Դարանաղեաց գավառի Աւագ վանքում։ Աւագ վանքի միաբաններից հաջորդը ինքը՝ գրիչ Վարդանն է, որին հանդիպում ենք այդտեղ ոչ միայն 1200 թ., այլև 1201 թվականին՝ Ղազար և Ստեփաննոս գրիչների հիշատակարաններում։ Ստեփաննոսը նրա մասին 1201 թ. գրում է. «Եւ զընտրեալ քահանայն Վարդան յիշեսջիք ի տէր, զի բազում իրօք օգնական եղև մեզ»[61]։ Այնուհետև Տոնականում հիշատակված Վարդանի եղբայր Բարսեղին, Հակոբին, Ոստակես միայնակյացին, Թորոսին հանդիպում ենք Աւագ վանքում այդ ժամանակ ընդօրինակված տարբեր ձեռագրերում, որպես տեղի միաբաններ։

Ահա և այլ փաստարկներ, որոնք խոսում են Աւագ վանքի միաբան Վարդանի և Մշո Տոնական ընդօրինակող Վարդանի նույնության օգտին։ Գարեգին Հովսեփյանը «Յիշատակարանքի» Ա հատորում Վարդանի 1200 թ. Աւետարանից երկու նկարազարդ էջերի հետ բերել է նաև մի էջ՝ որպես գրչության նմուշ[62]։ Ով տեսել է Տոնականի գրությունը, առաջին իսկ հայացքից կնկատի, որ Աւետարանից բերված այս էջի գրությունը շատ է նման, կամ ավելի շուտ նույնն է Տոնականի գրության հետ։ Այդ ժամանակ Լուսավորչի վանքում Ավետարանը գրվում է բոլորգրով[63], այնինչ Վարդանը ոչ միայն Ավետարանը, այլև Տոնականը երկաթագրով է գրում։ Մեզ հետաքրքրող ձեռագրերի հիմնական գրության նույնությունից բացի, անշուշտ, ոչ պատահականորեն բերված այս էջում՝ գրչագրական մի երևույթ ավելի է հաստատում մեր ենթադրությունը։ Ավետարանից բերված էջի երկրորդ սյունակի չորրորդ տողը վերջանում է «աստուածային» բառով, իսկ հաջորդ տողն է «աւք վարժեալ ուսմամբ», որի առաջին բառը, ինչպես տեսնում ենք, թերի է։ Գրիչը մոռացել է բառի կեսը և ահա լրացվել է նախորդ տողի վերջում ԱՒՐԻՆ (աւք) մասնիկը այնպիսի տառաձևերով, որպիսիք հանդիպում ենք Մշո Տոնականի մեջ, գրչի անվան մի քանի հիշատակություններում և նույնպիսի սրբագրություններում[64]։ Այդ տառերի սկզբնածայրերը և վերջնածայրերը ավարտվում են եռանկյունաձև։ Դեռ ավելին. այդ նույն տառերով են նշանակված ինչպես Աւետարանի, նույնպես և Տոնականի պրականիշերը։ Այս երկու ձեռագրերը գրված են միանման բաղադրության և գույնի թանաքով։ Ավետարանը նկարագրող Բաբգեն Կյուլեսերյանը գրում է. «Այնքան թթու (ասիտ) եղած է բաղադրությունը մելանին, որ ծակծկվեր է գրերուն տեղերը... որ շատ մի էջեր բոլորովին թռած են և գրերուն ուրցեցուցած տեղերը հազիվ հազիվ կերևին»[65]։ Այս նույն երևույթը նկատելի է նաև Տոնականի մեջ, բայց ոչ այդ խստությամբ և չափերով, պատճառը Տոնականի մագաղաթի ամրությունն է, որովհետև միայն բարակ թերթերի վրա է նկատելի ճանաքի բացասական ազդեցությունը[66]։ Միևնույն սկզբունքով են կազմված նաև հիշյալ ձեռագրերի պրակները։ Ավետարանի «թերթերը կարի

61 Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 7։

62 Յիշատակարանք, Ա, էջ 643—644։

63 Անդ, էջ 685։

64 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 323բ, 494ա, 510ա և այլն։

65 Բաբգեն Կյուլեսերյան, Ցուցակ, էջ 29։

66 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 285։